Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2022թ. սեպտեմբերի 18-ից 20-ը Ռուսաստանի Դաշնություն՝ ք. Սոչի կատարած գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝
Արման Խոջոյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝
ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

3.Գործուղման վայրը և ժամկետները՝
Ռուսաստանի Դաշնություն, ք. Սոչի 2022թ. սեպտեմբերի 18-20-ը

4. Հրավիրող կողմը՝
Ռուսաստանի Դաշնության արդյունաբերության և առևտրի նախարարություն

5. Գործուղման նպատակը՝

- Մասնակցություն «INNOFOOD» սննդարդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտում նորարարական տեխնոլոգիաների միջազգային ամենամյա համաժողովին

6. Քննարկված թեմաները՝

- Գյուղատնտեսության ոլորտում թվային տեխնոլոգիաների առաջատար ընկերությունների, տեղական և օտարերկրյա իշխանությունների ղեկավարների, գիտական կենտրոնների ներկայացուցիչների, ներդրողների և արտադրողների ներգրավում մեկ միասնական հարթակում՝ գործարար կապերի հաստատման և ամրապնդման նպատակով
- Պարենային անվտանգության ապահովում, արտահանման ծավալների խթանում, նոր շուկաների ինտեգրում, արտադրողականության ծավալների ընդլայնում թվային տեխնոլոգիաների ներդրման հաշվին
- Գործարար կապերի ստեղծում և ամրապնդում մասնավոր հատվածի և արտադրողների միջև

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

- 2022 թվականի սեպտեմբերի 18-20-ը Սոչիում տեղի ունեցավ INNOFOOD՝ սննդի արդյունաբերության և գյուղատնտեսության նորարարական տեխնոլոգիաների միջազգային համաժողովը: Միջոցառումը կազմակերպվել էր Ռուսաստանի Դաշնության արդյունաբերության և առևտրի նախարարության հովանու ներքո: Համաժողովին մասնակցել են ավելի քան 150 միջազգային ընկերություններ, որոնք ցուցահանդեսի ընթացքում ներկայացրել են ցուցանմուշներ դինամիկ զարգացող ոլորտներից՝ հումքի և սննդի այլընտրանքային աղբյուրներ, անհատականացված և մասնագիտացված սնուցում, խելացի և օրգանական գյուղատնտեսություն, մատակարարման խելացի շղթաներ, ուղղահայաց ֆերմաներ, սննդամթերքի հումք այլընտրանքային աղբյուրներից, կանաչ գյուղատնտեսության զարգացմանն ուղղված բեկումնային SS լուծումներ, դիետիկ հավելումներ և այլն: INNOFOOD բիզնես ծրագիրը ներառում էր ավելի քան 20 միջոցառում FoodTech օրակարգի ամենաարդիական թեմաներով. հիմնական ռազմավարության նիստում քննարկվել են FoodTech-ի մեծ ռազմավարությունները և տեխնոլոգիաների դերի փորձագիտական գնահատականները համաշխարհային պարենային անվտանգության ապահովման գործում: Կազմակերպված էր նաև ստարտափ մրցույթ, որտեղ երիտասարդ ձեռներեցները ներկայացնում էին FoodAgriTech ոլորտում նորարարական զարգացումները, իսկ սկսնակ հաղթողները իրենց նախագծերը զարգացնելու և ֆինանսավորելու բացառիկ հնարավորություն ստացան:
- Համաժողովի ընթացքում «Միջազգային համագործակցություն. ապրանքների եվ տեխնոլոգիաների արտահանում» խորագրով քննարկմանը Ա. Խոջոյանը հանդես եկավ որպես բանախոս: Նա ներկայացրեց սննդարդյունաբերություն ոլորտում Հայաստանի կառավարության որդեգրած քաղաքականությունը, ոլորտում առկա խնդիրները, որոնց բախվում են թե՛ արտադրողները, թե՛ վերամշակողները, մատնանշեց ռազմավարական քայլերի հաջորդականությունը՝ կարևորելով թվային տեխնոլոգիաների ներդրումը սննդարդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտում: Խոսելով սննդարդյունաբերության ոլորտում առկա մարտահրավերների մասին՝ նախարարի տեղակալը կարևորեց «INNOFOOD» միջազգային համաժողովի դերը, որը մեծ հնարավորություն է սկսնակ ձեռներեցների համար նորարարական տեխնոլոգիաների առաջմղման և ֆինանսավորման տեսանկյունից: Անդրադառնալով արտահանման ծավալների խթանմանը՝ Ա. Խոջոյանը նշեց, որ սննդարդյունաբերության ոլորտի առաջատար ընկերությունները պետք է դուրս գան միջազգային շուկաներ՝ ընդլայնեն փոխգործակցությունը միջազգային գործընկերների հետ, ինչը իր հերթին կապահովի արտադրողականության ծավալների աճ:

- Հանդիպում Ռուսաստանի Դաշնության արդյունաբերության և առևտրի նախարար Դ. Մանտուրովի հետ: Կողմերը անդրադարձան նորարարական տեխնոլոգիաների ներդրման, ինչպես նաև արտասահմանյան ընկերությունների կողմից իրականացվող ներդրումներին առնչվող ոլորտի մարտահրավերներին ու խնդիրներին: Քննարկվեցին պարարտանյութերի մատակարարմանն առնչվող մի շարք հարցեր և պայմանավորվածություն ձեռք բերվեց մշակել ընթացակարգ, որի արդյունքում գյուղատնտեսական սեզոնին կապահովվի պարարտանյութերի սահուն մատակարարումը հայ ֆերմերներին:
- Հանդիպում «Ուրալքիմ» կազմակերպության գործադիր տնօրեն Դմիտրի Կոնյաևի հետ: Հանդիպման ընթացքում կողմերը անդրադարձան կազմակերպության կողմից մշակված Digital Agro թվային ծառայությունների հարթակին և Cyberhectar հայեցակարգին, որոնց հիմքում տվյալների ստանդարտացումն է և լավագույն թվային լուծումների ինտեգրումը: Հարթակը հնարավորություն կտա ապահովել տեղեկատվության փոխանակում գյուղատնտեսական արտադրողների և իշխանությունների միջև, ապահովել արտադրանքի և պարարտանյութերի հետագծելիությունը, գյուղատնտեսական տեխնոլոգիաների վերաբերյալ տվյալների և վերլուծությունների հավաքագրումը և վերահսկել նպատակային ֆինանսավորման օգտագործումը: Նախագիծը կարող է գյուղատնտեսական ձեռնարկություններին տրամադրել թվային լուծումներ, որոնք ամբողջությամբ և համակողմանիորեն կբավարարեն ֆերմերների կարիքները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

- Ռուսաստանի Դաշնության արդյունաբերության և առևտրի նախարար Դ. Մանտուրովի հետ հանդիպման ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել մշակել ընթացակարգ՝ գյուղատնտեսական սեզոնին պարարտանյութերի սահուն մատակարարումը հայ ֆերմերներին ապահովելու նպատակով:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

10. Ստորագրությունը, ամսաթիվը՝

9/29/2022

X

ԱՐՄԱՆ ԽՈՋՈՅԱՆ

Signed by: KHOJOYAN ARMAN 1507870647

29.09.2022թ.